ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-5-3-Ա

ք. Երևան 25.05.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի մայիսի 25-ի նիստում քննարկեց 2021 թվականի ապրիլի 22-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված՝ Philip Morris Products S.A. (Quai Jeanrenaud 3 CH-2000 Neuchâtel, CH) ընկերության բողոքը «IQOS DUO» (IR1489963) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի համաձայն հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան տարբերակիչ հատկություն չունեցող տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին ծանուցմանն ի պատասխան հայտատուն ներկայացրել է անընդունելի առարկություն:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հայտատուն ներկայացրել է հայտարարություն «DUO» բառի նկատմամբ բացառիկ իրավունքից հրաժարվելու մասին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության

բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «IQOS DUO» (IR1489963) ապրանքային նշանը գրանցել՝ «DUO» բառին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ